



ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Խորհրդարանի ընտրուած 13 յանձնախումբերը երկ ժողով գումարեցին եւ ընտրեցին իրենց նախագահը եւ քարտուղարը: Երեսփոխան Իպրահիմ Զընասան ընտրուեցաւ: Ելեմտական եւ ամսվարկի յանձնախումբին նախագահը: Ժորժ Ատուան ընտրուեցաւ Վարչակազմի եւ արդարադատութեան յանձնախումբի նախագահ: Ֆատի Ալամ



ընտրուեցաւ Արտաքին կապի եւ արտերկրի լիբանանցիներու յանձնախումբի նախագահ: Յակոբ Բագրատունեան ընտրուեցաւ Գաղթականներու յանձնախումբի նախագահ: Այսպիսով Խորհրդարանը ամբողջացուց իր յանձնախումբերու ընտրութիւնը եւ մօտ օրէն պիտի սկսի աշխատանքի, յանձնախումբերու միջոցով քննարկելու համար բարեկարգումի թղթածրարը եւ այլ շինիչ առաջարկներ:

ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿՈՉԸ

Լիբանանի փոխվարչապետ Սաատը Շամի կոչ ուղղեց Նոր Խորհրդարանին՝ աշխատանք տանելու դրամատուներու հատուածի վերակազմակերպման համար: Ան աւելցուց, որ կառավարութեան առաջարկած բանաձեւին



վրայ փոփոխութիւն կարելի է կատարել, պայմանաւ որ այդ փոփոխութիւնը պատճառ չդառնայ վերաբանակցելու Արժողի միջազգային հիմնադրամին հետ:

Շամի դրամատուներուն կոչ ուղղած էր բաժնետերերուն բեռնցելու վնասին մէկ մասը ու անկէ ետք միայն ձեռք դնել ի պահ դրուած գումարներուն վրայ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԲՈՂՈՔԵՅ

Յունական կառավարութիւնը բողոքագիր մը ներկայացուց Յունաստանի մէջ լիբանանեան դեսպանատան՝ Յըզպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Յասան



Նարալլայի խօսքին մէջ Յունաստանի վրայ կատարուած յարձակումին համար: Յունաստան նշեց, թէ այն նաւը, որ պեղում պիտի կատարէ «Զարիշ» հորին մօտ, չի պատկանիր յունական պետութեան, այլ կը պատկանի միջազգային ընկերութեան մը, որու մէջ Յունաստան փոքր բաժնի մը ունի:

ՓՈՔՐ ԱՃ ՈՃԻՐՆԵՐՈՒ ԹԻՒՆ ՄԵՋ

Միջազգային տեղեկատուական գրասենեակը, որ կ'արձանագրէ ոճիրներու եւ գողութեան թիւերը, յայտարարեց, թէ 2022-ի առաջին հինգ ամիսներուն փոքր աճ մը արձանագրուած է Լիբանանի մէջ տեղի ունեցած բռնարարներու թիւին մէջ: Ինքնաշարժներու գողութիւնը աւելցած է



3.2 առ հարիւր համեմատութեամբ: Ոճիրներու թիւը աւելցած է 9 առ հարիւր համեմատութեամբ: Գողութեան արարքները աւելցած են 1.2 առ հարիւր համեմատութեամբ: Անձնասպանութեան պարագաներու թիւը նուազած է 7.7 առ հարիւր համեմատութեամբ:

ԱՄՆ ԵՒ ՄԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ՈՐՈՇԵՑԻՆ ՇՐՋԱՆՑԵԼ

Ամերիկեան «Սի.Էն.Էն.» պատկերասփիւռի կայանը յայտարարեց, որ ԱՄՆ-ի բարձրաստիճան պատասխանատուներ տեղեկացուցած են Մեուտական Արաբիոյ ղեկա-



վարներուն, թէ իրենք պատրաստ են բնականոնացնելու յարաբերութիւնը երկու երկիրներուն միջեւ եւ շրջանցելու լրագրող հաշոյքի սպասութեան հարցը:

Ըստ պատկերասփիւռի կայանին, այս որոշումը կը համարուի շրջադարձ մը նախագահ Ճօ Պայտընի վարչակազմին համար, որ իշխանութեան հասնելէն ետք խոստացած էր Մեուտական Արաբիան դարձնել «ատուած» վարչակարգ մը: Վարչակազմը կ'ամբաստանէր գահաժառանգ իշխան Մոհամմատ Պըն Սալմանը հաշոյքի ոճիրը կազմակերպելու համար:

Ուքրաինոյ դէմ Ռուսիոյ պատերազմը եւ անոր որպէս արդիւնք բնական կազի եւ քարիւղի գինին բարձրանալը ստիպեցին նախագահ Պայտընը մէկ կողմ դնել իր խոստումը՝ դատելու համար հաշոյքի ոճրագործները, եւ Նոր Էջ մը բանալ մեուտական իշխանութիւններուն հետ:

ՅՈՐՂԱՆԱՆ ԿԸ ԴՏԱՊԱՐՏԵ

Յորդանանի Արտաքին գործերու նախարարութիւնը խստօրէն դատապարտեց այն յարձակումը, որու ենթարկուեցան Երուսաղէմի Յոյն Ուղղափառ եկեղեցիին պատկանող կալուածները իսրայելեան զաղութատիրական ուժերու կողմէ: Նախարարութիւնը դատապարտեց



այն վճիռը, որ արձակուեցաւ Իսրայելի դատական բարձրագոյն ատենախոս կողմէ՝ եկեղեցւոյ կալուածներուն առնչութեամբ: Ան անվաւեր համարեց այն վճիռը, որ արձակուած է ապօրինի դատարանի մը կողմէ՝ գրաւեալ շրջանի մը կալուածներուն նկատմամբ:

Յայտարարութեան մէջ ըսուած է, որ Յորդանան չի ճանչնար որեւէ վճիռ, որու նպատակն է փոխել գրաւեալ շրջաններու ինքնութիւնը: Յորդանան նեցուկ պիտի կանգնի պաղեստինցի ժողովուրդին՝ անփոփոխ պահելու համար Երուսաղէմի մէջ քրիստոնէական եւ իսլամական սրբատեղիներու կարգավիճակը:

ՌՈՒՄԱԿԱՆ ԴՏԱՊԱՐՏՈՒՄ

Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, որ խստօրէն կը դատապարտէ իսրայելեան յարձակումը Դամասկոսի միջազգային օդակայանին վրայ: Ըստ ստորոգ տեղեկութիւններու, օդակայանի էջընդին վնասուած է, հետեւաբար օդակայանի պատասխանատուներ ստիպուած յետաձգած են կարգ մը թռիչքներ 48 ժամուան համար: Սուրիոյ Փոխարարութեան նախարարութիւնը յայտարարած էր բոլոր թռիչքներու յետաձգումը՝ օդակայանին մէջ կարգ մը գործիքներու չաշխատելուն պատճառով:

ՊԻՏԻ ՓՈՐՁԵՆԶ ԶԱՍՈՉԵԼ ԹՈՒՐԵԻԱԸ

Շուէտի արտաքին գործերու նախարար Ան Լինտի յայտնեց, որ իր երկրին նպատակն է շարունակել շինիչ



երկխօսութիւնը Թուրքիոյ հետ, այս վերջինը համոզելու համար՝ չմերժել իր երկրին անդամակցութիւնը ՆԱՌՕ-ին: Ըստ Լինտիի, Շուէտի անդամակցութիւնը պիտի օժանդակէ Թուրքիոյ ապահովութեան արագակողմին: Իսկ ահաբեկչութեան դէմ պայքարին համար, Շուէտ պիտի հրապարակէ Նոր օրէնք մը 1 Յուլիսին, ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ օժանդակելու համար իր դաշնակիցներուն:

ՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ ՉԷ

Երեւանի մէջ կայացած ԶԱՊԿ նախարարներու խորհուրդի ժողովին մասնակցողները ուշադրութիւն դարձուցած են միջազգային եւ տարածաշրջանային ապահովութեան վիճակին: Կազմակերպութեան քարտուղար Սթանիսլաւ Չաս ամփոփած է նախարարներու աշխատանքը:



Արեւելեան Եւրոպայի հատուածին մէջ վիճակը կ'ուղղուի դեպի ժխտականը: Նախարարները մտահոգութիւն յայտնած են վիճակի վատթարացման համար: Յստակ դիրքորոշում արտայայտուած է ապահովութիւնը չձեւելու կարգ մը երկիրներու շահին համաձայն, այլ զայն ընկալելու որպէս հաւասարութիւն: Այսինքն, ամէն երկիր իրաւունք ունի վայելելու ապահովութիւն հաւասար չափով ուրիշ երկիրներու նման: ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին դէրը պետք է ամրապնդել:

Չաս յայտնած է, որ Ղազախստանի մէջ կազմակերպութեան ուժերու միջամտութիւնը լաւ օրինակ էր տագնապներու պարագային կազմակերպութեան դրական դերին մասին: Տազնապներու պարագային միջամտութեան ամբողջ համակարգը վերատեսութեան կ'ենթարկուի եւ պետք եղած քայլերը կ'առնուին այս համակարգը զարգացնելու եւ արդիւնաւետութեան բարձր մակարդակի հասցնելու համար:

ՄԻՐՉՈՅԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ԶԱՊԿ արտաքին գործերու նախարարներուն ուղղուած իր ուղերձին մէջ շեշտած է համագործակցութեան կարեւորութիւնը եւ արտաքին քաղաքականութեան համակարգումը:



Միրզոյեան նախարարներու ուշադրութեան յանձնած է, թէ ԶԱՊԿ անդամի մը, այս պարագային Հայաստանի, տարածք մտած են Ատրապէճանի ուժեր ու տակաւին կազմակերպութիւնը ոչ մէկ քայլ դիմած է անոնց դէմ:

ՌՈՒՄԻԱ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԷ

Ռուսիոյ Դաշնութեան Վիեննայի մէջ միջազգային կազմակերպութեան մօտ պատուիրակ Միխայիլ Ուլիանով յայտնեց, որ Հիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութեան հրապարակած տեղեկագիրը Իրանի դէմ, Արեւմուտքի դրդումով, մեծ վնաս հասցուց այդ հողովոյթին:



Իր կողմէ, Հիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութեան տնօրէն Ռաֆայել Կրոսի յայտնեց, որ Իրանի առած քայլերը՝ որպէս բողոք գործակալութեան իրեն դէմ կայացուցած որոշումին համար, պիտի վնասեն Իրանի հիւլէական բանակցութեան հողովոյթին: Ըստ Կրոսիի, Իրան պետք է վստահի գործակալութեան անաչառ քննիչներուն, որոնք Իրանի մասին տեղեկութեան միակ աղբիւրն են՝ ուղղուած միջազգային ընտանիքին:

ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Իսրայելի պատկերասփիւռի թիւ 12 կայանը հաղորդեց, որ Դամասկոսի օդակայանի ռմբակոծումը երկու շաբաթ առաջ առնչուած էր հոն հասնելիք իրանեան զենքի խմբաբանակին: Ըստ կայանին, այդ ռմբակոծումը արգելք հանդիսացաւ այդ զենքի փոխարկութեան:

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՏՈՐԿԻՆ ԲԱՐԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՅԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Յայրց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց Ֆրանսիայի Աֆորվիլ քաղաքի Սուրբ Մեսրոպ հայկական դպրոցի շուրջ 40 աշակերտներին:

Դպրոցի տնօրէն տիկին Նորա Թաշճեանը, հայցելով Ամենայն Յայրց կաթողիկոսի օրհնութիւնը, տեղեկութիւններ փոխանցեց դպրոցի ստեղծման պատմութեան, իրականացուող ծրագրերուն եւ եկեղեցի-դպրոց փոխգործակցութեան մասին:



Վեհափառ Յայրապետը, ողջունելով աշակերտները, գոհունակութեամբ արձանագրեց, որ գեղեցիկ աւանդոյթ դարձած է Ֆրանսայի մէջ գործող հայկական դպրոցներու եւ վարժարաններու սաներու այցելութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորին Սրբութիւնը հանդիպման ընթացքին յորդորեց դպրոցի սաներուն Յայաստանի տպաւորութիւններով կերտուած տեսիլքով շարունակել ուսումնառութիւնը եւ իրենց նպաստը բերել հայրենիքի զօրացման ու շէնքաման:



Յայրց Յայրապետը նաեւ իր գնահատանքը յայտնեց դպրոցի տնօրէնութեան, ուսուցչական անձնակազմին եւ հոգաբարձուներուն Յայաստան եւ Մայր Աթոռ այցելութիւններ կազմակերպելու համար՝ մաղթելով արգասաբեր իրագործումներու շարունակականութիւն եւ բարի տեսլականներու իրականացում:

Իրենց հերթին, աշակերտները երաժշտական կատարումով հաճելի անականկալ մատուցեցին Վեհափառ Յայրապետին:

Աւարտին, Ամենայն Յայրց կաթողիկոսը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց դպրոցի աշակերտները՝ անոնց ընծայելով սրբապատկերներ եւ խաչեր:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԱՐՈՒԵՍԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՀԱՆԴԵՍ ՊԻՏԻ ՉԱՅ ԲԱՅԱՌԻԿ ԶՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՎ

2022 թուականին կը լրանայ Երեւանի Ժամանակակից արուեստի թանգարանի հիմնադրման 50-ամեակը:

Յոբելեանկան նշանակալի իրադարձութեան, ինչպէս նաեւ՝ թանգարանի հիմնադիր, արուեստաբան Յերիկ Իգիթեանի 90-ամեակին առիթով, Ժամանակակից արուեստի թանգարանի նախաձեռնութեամբ, 16 Յունիսին,



Յանրապետութեան հրապարակ, Կառավարական N 2 տան հասցեով (Նախկին Արտաքին գործերու նախարարութեան շէնք) պիտի մեկնարկէ յոբելեանկան միջոցառումներու շարքը:

17 Յունիս 2022-ին նշուած հասցեով երկու ամիս տեւողութեամբ պիտի գործէ բացառիկ ցուցահանդէս, որուն ընթացքին պիտի ներկայացուին 150 հեղինակի 300-էն անէլի աշխատանքներ, պիտի ցուցադրուին թանգարանի ստեղծման պատմութեան ու գործունէութեան, հեղինակներուն նուիրուած տարբեր ժամանակներու մէջ նկարահանուած ֆիլմեր: Յուցահանդէսի ընթացքին պիտի կազմակերպուին տարաբնոյթ մշակութային միջոցառումներ եւ ծրագրեր:

ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՅԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԿԸ ՅԻՐԸՆԿԱԼԵ ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ ՅՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ՝ ՅՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՐ

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայրց Տ. Ռաֆայէլ Ի.Կ. Կաթողիկոս-Պատրիարքը Ամերիկայի Միացեալ Նահանգներ կատարած իր հայրապետական այցելութեան օրակարգին մէջ նախատեսուած էր նաեւ այց Յայ Զոյրերու Վարժարան:

Երեքշաբթի, 7 Յունիս 2022-ին, վարժարան պատիւը ունեցաւ իր երդիքին տակ հիւրընկալելու Յոգեւոր Տերը: Վարժարանի աշակերտները դպրոցին գլխաւոր մուտքին, հայաստանեան եւ ամերիկեան դրօշակներով, հայկական աւանդական աղ ու հացով դիմաւորեցին Ամենապատիւ եւ Գերերջանիկ կաթողիկոս-պատրիարքը:

Օրուան համար իւրայատուկ պատրաստուած յայտագիրը տեղի ունեցաւ Վարժարանի Դանիէլեան սրահին մէջ, ուր ներկայ էին նաեւ Յիւսիսային Ամերիկայի եւ Գաւառայի առաջնորդ Արհիպատիկ Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանը, գերյարգելի Յայր Բարսեղ Ծ. Վրդ. Բարսեղեանը, գերապատիւ հայրեր եւ Անարատ Յոլութեան Միաբանութեան առաքինազարդ շոյրեր:



Յանդիսավարութեամբ Տիկ. Մարի Երալեանի, յայտագիրը սկիզբ առաւ Ամերիկայի, Յայաստանի եւ Յայ Զոյրերու վարժարանի քայլերգներով: Անգլերէն բացման խօսքով հանդէս եկաւ վարժարանի տնօրէն Դոկտ. Խուլիօ Թէլէզը, որ նշեց, որ ինք Յոգեւոր Տիրոջ բարի գործերուն մասին շատ ծանօթ է, բայց ի մասնաւորի տպաւորուած է անոր՝ «ես պարզ հոգեւորական մըն եմ, որ կ'աշխատիմ եկեղեցւոյ համար» խօսքով: Ան բարի գալուստ մաղթեց Յոգեւոր Տիրոջ, զայն համարեց օրհնութիւն բոլորին համար եւ շնորհակալութիւն յայտնեց անոր աղօթքներուն համար:

Գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան մանկապարտեզի աշակերտները՝

«Յայ Մանուկ» երգով, վարժարանի երգչախումբը՝ «Կիլիկիա» եւ «Յայրապետական օրհներգ» երգերով, որ մէ տեղ բեմ բարձրացաւ փոխտնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեանը՝ հայերէն բացման խօսքով: Ան ըսաւ, որ պատիւ, բերկրանք եւ հպարտութիւն է դպրոցէն ներս հիւրընկալել Յոգեւոր Տերը, որուն լաւապէս վայել է «շէնքանոյ» մակդիրը, որովհետեւ իր առաքելութեան ուղեծիրին մէջ ուր որ ալ գտնուած է ան՝ միայն շէնքուցած ու ծաղկեցուցած է:

Տ. Ռաֆայէլ-Պետրոս կաթողիկոս-պատրիարքին հոգեկերտ, մարդակերտ, եկեղեցաշէն, ծառայաւեր, մարդատու արժանիքներու միաձուլուած մարմնաւորումը հանդիսացող հոգեւորական մը ըլլալու հանգամանքները պարզօր օրհնակներ տալով, Տիկ. Ռիթա Պոյաճեան երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնեց Յոգեւոր Տիրոջ՝ քաջ հովիւին, որ պատրաստ է իր 99 ոչխարները թողելու, միւրոքած մէկ ոչխարը փրկելու համար:

«Մենք հպարտ ենք ձեզմով, ձեր վաստակով, ուրախ ենք ձեր հովանին վայելելով: Ձեր սփռած լոյսը եւ յոյսը կը վառին, կը լուսավառեն ու կը լուսավառեն ամենուրեք», իր խօսքը եզրափակեց վարժարանի փոխտնօրէնուհին:

Ուլիսիամ Սարոյեանի գործէն անգլերէն հատուածի մը աշակերտական ասմունքէն տեղ, ներկայացուցաւ «Ուզունտարա» եւ «Տքել» պարերը, որոնց յաջորդեց «Եկեղեցին Յայկական» բանաստեղծութեան կատարումը:

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Յոգեւոր Տերը իր հայրապետական պատգամին մէջ նշեց, որ հոգեւորականներուն դերը հոն կը կայանայ, որ երբ ազգին նաւը սկսի տատանիլ եւ բարձրացող ալիքներու դիմաց կը գտնուի, եկեղեցին ներկայ է՝ խաղաղութիւն եւ օրհնութիւն տալու: Ան անդրադարձաւ նաեւ Անարատ Յոլութեան Միաբանութեան 175-ամեակին. «175 տարիներէ անոնք կ'աշխատին տալու շարունակական զարգացում, որպէսզի կեանքի բոլոր դժուարութիւններուն դէմ կարելի ըլլայ տոկոյալ»: Ան



յուսաց եւ մաղթեց, որ այն ժամանակ երբ Անարատ Յոլութեան Զոյրերը այս առաքելութիւնը կը կատարեն, անոնք գտնեն նաեւ երիտասարդ հոգիներ, որոնք նոյն ազնուութեամբ իրենց անձը նուիրեն ազգի ու եկեղեցւոյ, ինչպէս նաեւ հայ գաղութի մարդասիրական ծառայութեան: Յոգեւոր Տերը ընդգծեց, որ բոլոր հոգեւորական եղբայրները կը ծառայեն ազգի գաւառներուն՝ հոգեւոր աշխարհը զօրացնելու եւ զանոնք Աստուծոյ բարեկամութեան մէջ պահելու: Տ. Ռաֆայէլ-Պետրոս կաթողիկոս-պատրիարքը իր խօսքը փակեց՝ հայցելով, որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ ներկաներուն վրայէն:



Իր սրտի խօսքին մէջ, վարժարանի ընդհանուր պատասխանատու Զոյր Լուիզա Գասարճեան ըսաւ, որ հովապետական այցելութեամբ Միացեալ Նահանգներ գտնուող Յոգեւոր Տիրոջ ներկայութիւնը խթան է յաւելելու ջանքով թափ տալու համար աստուածահաճոյ եւ մարդասիրական առաքելութեան մէջ: Ան նշեց, որ Անարատ Յոլութեան Միաբանութեան աշխատանքը եւ շանսափրութիւնը կը դրսեւորուի Յայ Զոյրերու Վարժարանին ճամբով, որ յանձնառու է պատրաստելու նոր սերունդներ, որոնք զինուած ըլլան գիտութեամբ, հայկական շունչով ու քրիստոնէական ոգիով: Զոյր Լուիզա Գասարճեան կատախեցուց, որ Պատրիարքութիւն-Միաբանութիւն լաւապէս պիտի մնայ անքակտելի ու ուժեղ պիտի միացնեն, որպէսզի համայնքի գաւառներուն համար ապահովեն միայն լաւագոյնը եւ ամենաբարին:

Այնուհետեւ, Յայ Զոյրերու Վարժարանին անունով, Առաքինազարդ Զոյր Լուիզա Գասարճեանը Ամենապատիւ եւ Գերերջանիկ Յոգեւոր Տիրոջ նուիրեց յուշանուր մը:

Յայտագիրը եզրափակուեցաւ «Յայր Միացեք» երգով՝ ամբողջ աշակերտութեան կատարողութեամբ եւ բոլոր ներկաներուն մասնակցութեամբ:

ՅԱՅ ԵՒ ՌՈՒՄ ԲԺԻՇԿՆԵՐԸ «ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԵՋ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ ՅԱՄԱՏԵՂ ՎԻՐԱՅԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւանի եւ Մոսկուայի նոր համագործակցութեան շրջանակին մէջ, 10-11 Յունիսին, Ռուսիոյ առաջատար բժիշկները «Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնին մէջ պիտի իրականացնեն հիւանդներու ընդունելութիւն, վիրահատութիւններ, խորհրդատուութիւն եւ բուժման նոր արհեստագիտութիւններու կիրառման աշխատանքներ:

Մոսկուայի կառավարութեան առողջապահութեան բաժանմունքի Ն. Ֆիլաթովի անուան մանկական քաղաքային հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Անթոնինա Չուպարովան եւ Երեւանի Զողաքապետարանի «Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնի տնօրէն Լիբովա Տալաքեանը ստորագրեցին համագործակցութեան յուշագիրը:

«Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնի տնօրէն Լիբովա Տալաքեանը նշեց, որ Երեւանի մէջ «Տոմ Մոսկովի» կեդրոնի նախաձեռնութեամբ ստեղծուած նախաձեռնութեան շրջանակին մէջ հայ եւ ռուս առաջատար բժիշկները պիտի իրականացնեն փորձի, մեթոտաբանութեան եւ գիտական նորարարութիւններու փոխանակում:

«Բժշկական ոլորտին մէջ գիտութիւնը եւ կիրառումը իրար հետ խիստ կապուած են: Մեր գործընկերներուն հետ գործնական, լուրջ եւ բազմաառաջադրական գիտութիւն ծրագրաւորած ենք եւ այս օրերուն պիտի փորձենք իրականացնել: Նշեմ, որ այսօր հայ եւ ռուս մասնագետները համատեղ պիտի իրականացնեն երկու կարտեր, բարդ եւ հազուագիւտ վիրահատութիւն», ըսաւ ան:

Ն. Ֆիլաթովի անուան մանկական քաղաքային հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Անթոնինա Չուպարովան նշեց, որ բժշկական ոլորտին մէջ առանց միջազգային ընկերներու եւ կապերու հնարաւոր չէ:

դանցի գլխաւոր բժիշկ Անթոնինա Չուպարովան նշեց, որ բժշկական ոլորտին մէջ առանց միջազգային ընկերներու եւ կապերու հնարաւոր չէ:



«Մենք միշտ ուրախ ենք եւ պատրաստ ենք համագործակցելու տարբեր երկրներու բժշկական կեդրոններու եւ մասնագետներու հետ: Շատ ողջունելի է, որ երկու կողմերու մօտ ալ կայ ըմբռնում, որ բժշկութիւնը հիմնուած է համագործակցութեան վրայ: Սա շատ լաւ հնարաւորութիւն է բոլորիս համար, յատկապէս՝ երիտասարդ մասնագետներու, ովքեր հնարաւորութիւն պիտի ունենան ներկայացնելու



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԻՉ ԱՆՆԿՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՐԾ ԵՂԻԾԷ ՉԱՐԵՆՅ (1897 - 1937)

Է. ՄԱՍ



Եղիշէ Չարենց ժողովուրդի ծոցէն ծնած բանաստեղծն էր: Ան ապրեցաւ իր ժողովուրդի դառն պատմութիւնը իր բոլոր մարտամասնութիւններով: Դարձաւ թուրքին դէմ պայքարող կամաւոր: Ապա դարձաւ յեղափոխութեան պահակ, ժողովուրդին իրաւունքները եւ արդարութիւնը պաշտպանելու համար: Չարենցի համար յեղափոխութիւնը մարդոց կեանքին մէջ դէպի դրական փոփոխութիւնն էր, վեր ամէն անձնականացում:

1918-1920 թուականներուն կը գրէ «Սումա», «Ամբոխները խելագարուած» պոեմները եւ «Ողջակիզուող կրակ» շարքը: «Ամբոխները խելագարուած» երկարաշունչ բանաստեղծութեան նիւթը Ռուսոյ մէջ Համայնավար յեղափոխութենէն ետք սկսած քաղաքացիական պատերազմն է՝ յեղափոխական համայնավարներու եւ նախկին վարչակարգի համակիր ճերմակ ռուսներու միջեւ, որուն մասնակցած է Չարենց: Այս եղբայրասպան պատերազմին մէջ եղբայրը չի ճանչնար եղբոր, ամբոխները խելագարուած են... «Ամբոխները խելագարուած» պոեմին մէջ Չարենցը կը նկարագրէ իրական յեղափոխական գանգուածները, որոնք կ'երթային նուաճելու հին աշխարհի խորհրդանշան քաղաքը: Յեղափոխականներ պիտի կործանէին հին համակարգը ու կառուցէին նորը: Չարենցը կը մեծաբար ժողովուրդին կամքն ու անկոտորում ոգին: Ժողովուրդը պիտի քանդէ ճնշումի համակարգը, որու իշխանութիւնը տեսած էր երկար ժամանակ:

Յեռո՛ւ, մօտիկ ընկերներին,- աշխարհներին, արեւներին,- Յրանման հոգիներին:-
Բոլոր՛ր նրանց, ում որ հոգին վառոււմ է վառ,-
Բոլոր՛ր նրանց հոգիներին արեւավառ,-
Կեանքի՛, մահի՛ այս ամտեհի աղջամուղջում՝
Ողջակիզուող հոգիներին - ողջո՛յն, ողջո՛յն:-

Կուում էին ու կրուելով անցնում էին նրանք առաջ:
Ու դաշտերում իրիկնային մա՛հն էր քրքում համատարած:
Երգում էր նա՝ երգը խառնած իրանօթի գրկունկին,-
Անցնում էին նրանք առաջ ու կրակուած կուում էին:
Ե՛րգ էր սիրտը ամէն մէկի, երգ էր հայեացքը կրակոտ.
Վառոււմ էր սիրտը ամէնքի, որպէս կարմիր մի առաւուս:
Ե՛րգ էր կարծես արեւը հին՝ իրիկնային լոյսով վառուած -
Եւ երգելով կուում էին ամբոխները խելագարուած...
...

-Պիտի երթան առա՛ջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ,
Պիտի թափեն՝ նրա վրայ հազարամեայ մաղձը իրենց:
Քանդեն՝ պիտի ու աներեն, տեղը փոշի՝ պիտի փռեն -
Հազարամեայ քաղաքը այդ քանդեն՝ պիտի ու աներեն:-
Այրեն՝ պիտի, խելագարուած պիտի պարեն՝ հրդեհներում
Ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փռեն երկրի հեռուն:-
Ու մնացած մոխիրը ծիգ պիտի այրեն՝ նրանք նորից,
Որ կենսը հին, որպէս փիւնիկ, չբարձրանա՛յ մոխիրներին...
Քամո՛ւն տալով մոխիրը այն, որ տանի ու ետ չբերի -
Դէպի հեռո՛ւն պիտի երթան դեռ չծնուած արեւներ...
(Շարունակելի)

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԸՆՏԵԼԱՅԱԾ ՀԱՄԱԶԳԻՆ

Միացեալ Թագաւորութեան «Էքզիթըր» համալսարանի խումբ մը հետազոտողներ սկսած են սերտել առաջին հաւուն ընտելացումի պայմանները: Ի՞նչ էին պայմանները Ասիոյ մէջ, ուր առաջին հաւուն պահեցին որպէս մարդու օգտակար անասուն ու այս գործողութիւնը տարածեցաւ Ասիայէն անդին:



Հաւուն բազմացումը գիտնականներ կ'անչնեն Օայրագոյն Արեւելքի մէջ բրինձ ցանելուն ու առատ բերքին: Հաւը մօտ 10 հազար տարի առաջ սկսաւ պահուիլ որպէս մարդու ուտելիք միսի տեսակ: Եւրոպայի մէջ հաւուն կը հանդիպինք մօտաւորապէս 7 հազար տարի առաջ: Չոր բրինձի աճեցումն է, որ հաւու առաջին նախահայրը անտառի թռչունը իջեցուց ծառերէն վար, ուտելու համար բրինձը: Այս է առաջին հանդիպումը մարդուն եւ հաւազգիին միջեւ: Կապ, որ կը տեսէ մինչեւ մեր օրերը: «Սայրնս Տէյլի»

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՒՆԱՐԻՆԵԼԻ՞ ԶԵ.ՄԱՍ

ՓՈՔՐ ԱՍԻԱ
Իրանի բարձրաւանդակին համագոր կարեւորութիւն ունի Փոքր Ասիոյ բարձրաւանդակը, որ ներկայիս կը գտնուի Թուրքիոյ ամբողջական տիրապետութեան տակ: Փոքր Ասիան, Ասիոյ խորքը կը կապէ Եւրոպային եւ Միջերկրա-

կան ծովուն: Ասիան Եւրոպայի կապող հիմնական կամուրջն է:

1930-ականներէն ետք թեւէ Արեւմուտքը կը յայտարարէր, թէ Թուրքիա դեմոկրատական պետութիւն է, սակայն բոլոր դեկլարներն ալ շատ լաւ գիտէին, որ իշխանութիւնը Հանրապետական կուսակցութեան վերնախաւին ու բանակին ձեռքերուն մէջն էր: Արեւմուտքը պահեց այս դրուածքը վստահելու համար Թուրքիոյ մէջ քաղաքական կայունութեան որպէս իրենց դաշնակից պետութիւն:




Այս համակարգը սկսաւ փոխուիլ 1980-ական թուականներէն սկսեալ, երբ իշխանութեան հասաւ Թիւրքիւթ Օզալ, որու արմատները կ'երթային Փոքր Ասիա եւ ան տուֆի կրօնական դպրոցի հետեւորդ էր: Ան սկսաւ սեփականաշնորհել պետական հատուածին պատկանող մեծ հաստատութիւններ, դիւրացուց ներածումը: Այս փոփոխութիւնները յառաջ բերին իսլամ միջին դասակարգ մը, որ ապագային կորիզը դարձաւ իսլամական հոսանքին կողմէ հիմնուած կուսակցութեան մը կազմաւորումին: (Շարունակելի)

Աղբիւր՝ «Տը Ռիվէնձ Աֆ Ճիոկրաֆի», Ռոպրոթ Զափլան

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ Դ. ՄԱՍ

Անգլերէն հոգեբանութեան արմատն է psyche բառը, որ յունարէն կը նշանակէ հոգի: Ուրեմն, հին յոյն փիլիսոփաներ, որոնք հիմը դրին այս գիտութեան Զ.Ա. 4-րդէն 3-րդ դարերուն, կը հաւատային, թէ մարդու հոգին է որ պատճառն է իր վերաբերմունքին: Այս պատճառով գիտութիւնը կոչեցին հոգիի սերտողութիւն:



Հոգեբանութեան ճիւղը վերելք ապրեցաւ 19-րդ դարուն: Հիմնուեցան դպրոցներ, որոնք դեկլարը հոգեբան մըն էր եւ ուներ իր աշակերտները կամ հետեւորդները: Իւրաքանչիւր դպրոց կամ ուղղութիւն ուներ իր գիտական վարկածն ու փաստերը: Հոգեբանութեան երկրորդ դպրոցը հիմնուեցաւ Ռիխլիմ Ճէյմզի (1842-1910) կողմէ: Ան առաջին դպրոցի հիմնադիր Վիլհելմ Վուստթի աշակերտներէն էր: Դպրոցը կոչուեցաւ Functionalism: Այս դպրոցին նպատակն էր ցոյց տալ, թէ միտքը ինչ մասերէ կը բաղկանայ եւ ինչպէս կ'աշխատի: Ան հիմնեց հոգեբանական առաջին տարրալուծարանը Հարվըրտ համալսարանին մէջ եւ գրեց առաջին հոգեբանութեան մասին գիրքը ԱՄՆ-ի մէջ 1890 թուականին: Գիրքը կը կոչուէր The Principles Of Psychology: Այս դպրոցը սերտեց մտային աշխատանքը՝ յիշողութիւն, մտածում եւ ուշադրութիւն: Այսինքն այս դպրոցը կարեւորութիւն տուաւ միտքի աշխատանքին եւ ոչ միայն անոր կազմաւածքին: (Շարունակելի)

Աղբիւր՝ Psychology A Self-Teaching Guide, Frank J. Bruno, John Wiley and Sons Press, 2002

ՊԱՏՈՒԹԻՒՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ ԼԴ. ՄԱՍ

Այս շարքով պիտի շարունակենք ներկայացնել Արեւմտեան Հայաստանի հարցին վերաբերող պատմութեան ծայրերը ու անոնց վերլուծումը:



Պետք է երթալ պատմութեան խորքերը լաւ իմանալու եւ սերտելու համար Իթթիհատ ՎԷ Թերաքքը կուսակցութեան կապը սիոնիզմի հետ: Միջին դարերուն, Արեւմտեան Եւրոպայի մէջ հաստատուած էին հրեական գաղութներ: Այս գաղութներու հիմնադրութեան մասին պիտի խօսինք առանձին: Կարեւոր անոնց կատարած գործն է, որ պիտի սերտենք միասին: 1492 թուականէն սկսեալ, երբ քրիստոնեայ Սպանական թագաւորութիւնը Անտալուսէն հեռացուց վերջին իսլամ արաբները, սկսաւ մաք-


րագործումի արշաւ մը ամէն անձի դէմ որ քրիստոնեայ չէր: Հալածուեցան իսլամներ, հրեաներ կամ ուրիշ քրիստոնեայ որ կը համարուէր անհաւատ ըստ կաթողիկէ դաւանանքի հաստատած տիրաւորչական քննիչներու: Մեղաւոր գտնուած անձեր կ'էնթարկուէին չարչարանքի եւ միւնչե իսկ մահապատիժի՝ այրելով խարոյկի վրայ:

Այս հալածանքէն փախչելով, հազարաւոր հրեաներ փախան դէպի Օսմանեան Կայսրութիւն: Հրեաներու համայնք մը հաստատուեցաւ Յունաստանի հիւսիսը գտնուող Թեսալոնիքի կամ Սելանիկ նաւահանգիստին մէջ: (Շարունակելի)

Աղբիւր՝ «Սիոնիզմի եւ Փակթուրքիզմի Առնչութիւնները», Մէթո Չ. Տէրտերեան, 1990

ՍՈՐԴՏԱՊԱՅՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿՂՉԻԱՅՈՒՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Միացեալ Թագաւորութեան «Ուորուլք» համալսարանէն խումբ մը հետազոտողներ քննած են վարկած մը, որ կը վերաբերի ոչ-ընկերային անձերու մօտ ապագային յիշողութեան ու ուղեղի զարգացումի առնչուող հարցերու ի յայտ գալուն: Ըստ այս սերտողութեան, ընկերային կղզիացումէ տառապող անձեր 26 առ հարիւր համեմատութեամբ աւելի ենթակայ են յիշողութեան եւ ուղեղի զարգացումի առնչուող հիւանդութիւններ տառապելու:



Այս հարցախոյզին մասնակցած են 30 հազար անձեր: Հարցախոյզէն ի յայտ դարձաւ, թէ այն անձերը, որոնք տառապած են ընկերային կղզիացումէ, ապագային իրենց ուղեղի նկարներուն մէջ նկատուած են մոխրագոյն կէտեր, որոնք կ'առնչուին յիշողութեան եւ ուսումին: Այսինքն, այդ անձերը յիշողութեան եւ ուսումի դժուարութենէ պիտի տառապին: «Սայրնս Տէյլի»

ՄՇԱԿՈՅ ՈՒՇ ՄԻՏՆԱԴԱՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ՄՈՎԱՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒՄՅԻ - Բ. ՄԱՍ


Մովսէս Կաղանկատուացի 10-րդ դարու պատմաբանն է: Ան ծնած է Ուտիք նահանգի Կաղանկատուք գիւղին մէջ 900 թուականի շուրջ: Կաղանկատուացի կը յիշուի որպէս Աղուանից աշխարհի մասին գրած պատմաբաններէն մէկը: Իր երկը՝ «Աղուանից Աշխարհի պատմութիւն», լաւ աղբիւր է այդ երկրամասի պատմութեան մասին, մասնաւոր 10-րդ դարուն: Գիրքին մէջ արժեքաւոր տեղեկութիւններ կան Արցախի եւ Ուտիք աշխարհներու վաղ միջնադարեան ժամանակաշրջանի պատմութեան մասին:

Հեղինակը կը պատմէ, որ հայրենի երկրամասի եւ անոր եկեղեցիի հեղինակութիւնը բարձրացնելու համար Աղուանից իշխան Վարագ-Տրդատը Գրիգոր Ա. Լուսաւորիչի նշխարներէն բերելու նպատակով Այրարատեան նահանգ կ'ուղարկէ Իսրայէլ եպիսկոպոսը: Այրարատի մէջ երկար թախանձանքներէ ու մեծ տիկնոջ՝ Հեղինէի (Աղուանից Ձեւանշէր իշխանի քոյրը եւ մարգարան Գրիգոր Մամիկոնեանի կինը) միջնորդութենէն ետք Իսրայէլ եպիսկոպոսին կը նուիրեն Գրիգոր Ա. Լուսաւորիչի ծօտին մէկ մասը, որ բերուելով՝ հանդիսատարապէս կը գետնուրի Գլխովանքի մէջ: Պատմիչը միաժամանակ կը նշէ Գրիգոր Ա. Լուսաւորիչի մատուցներու բաժանումն արգիլուած ըլլալու եւ, իբրեւ բացառութիւն, Աղուանից եկեղեցիին նուիրելու փաստը: (Շարունակելի)

«Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն», Մանուկ Աբեղեան, Տպ. Սեւան, 1968

ՆՈՐ ԱՐՅԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒՆՏՈՂԻ ՊԻՏԱՆԻ ԿԵՏԵՐ Բ. ՄԱՍ

Ձեր համակարգիչը, որ օժտուած է «Ուինտոգ» համակարգով, կ'աշխատի ճիշդ ձեւով, այն պայմանով որ հոգ տանիք անոր համակարգին: «Ուինտոգ» համակարգը ունի կարեւոր կէտեր, որոնք օգտագործումը կարեւոր է համակարգիչին համար:



Երկրորդ կարեւոր հարցն է ա տ են - ա տ են քննել ձեր տիպը: Այս գործը կ'ա տ ա ր է լ ու համար կրնաք բանալ «My Computer» եւ մկնիկի աշ կոճակը սեղմել տիպի նկարին վրայ ու ընտրել Properties: Սեղմենք Tools եւ սեղմենք Check կոճակին վրայ: Ընտրենք Scan Drive: Համակարգիչը այս ձեւով պիտի քննէ մեր տիպը եւ տեղեկացնէ որտեւ խնդիր Ուինտոգ համակարգին մէջ:

Աղբիւր՝ «www.makeuseof.com» Կ. ԹՈՍՈՒՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 62-ՐԴ ՀՈՒՆՁԸ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՐՆԵՐ ՏՈՒՄ ԵՐԶՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՆՈՐ ՀՈՒՆՁԸ ՄԷ

Ուրբաթ, 3 Յունիս 2022-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Հայկազեան համալսարանը իր շրջափակին մէջ կազմակերպեց իր տարեկան վկայականաց բաշխման հանդիսութիւնը, որուն ընթացքին 107 ուսանողներ յաջողութեամբ աստիճաններէ վեր կ'առնէին իրենց աստիճանը, ինչպէս նաեւ մագիստրոսի աստիճանները՝ դառնալով Հայկազեանի 62-րդ հունձի շրջանաւարտները: Հանդիսութիւնը առաջինն էր 2020-էն սկսած «Գորոնա» ժահրի պարտադրած սահմանափակումներէն ետք, որ նաեւ սփռուեցաւ առցանց:



Ներկաներու ծափահարութիւններուն ներքեւ շրջանաւարտները դասախոսական կազմին հետ ուղղուեցան բեմ, ապա ինչեք Լիբանանի քայլերգը, որուն յաջորդեց համալսարանի հոգեւոր հովիւ Վեր. Ուիլյամը Վան Սանի աղօթքով պաշտօնական բացումը:

Հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր արաբական երկիրներուն մէջ ԵՌՆԵՍԵՕ-ի կրթութեան հարցերու շրջանային գրասենյակի տնօրէն Զոսթանցա Ֆարիսա, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ ԵՌՆԵՍԵՕ-ի արժեքներուն՝ ընդգծելով, որ անոնք կը գործադրուին նաեւ Հայկազեան համալսարանին կողմէ:



«ԵՌՆԵՍԵՕ-ն խորապէս կը հաւատայ, որ կրթութիւնը, բարձրագոյն կրթութիւնը եւ յարատեւ ուսումնասցնելու թիւնը հանրային օգուտ է: Կը սատարենք բարձրագոյն կրթութեան իրաւունքի պահպանման եւ կոչ կ'ուղղենք բոլորին անխտիր որակաւոր բարձրագոյն կրթութեան առիթներու ընծայումին», իր խօսքին մէջ հաստատեց տիկին Զոսթանցա Ֆարիսան:

Խօսելով Լիբանանի տնտեսական տագնապին մասին, տիկին Զոսթանցա Ֆարիսա շեշտեց, որ թէեւ տագնապը նշանակալից յետընթաց արձանագրած է բոլոր մարզերուն մէջ եւ ատիկա զգալի է ամէնուրեք, սակայն յոյս յայտնեց, որ տագնապը շուտով կ'աւարտուի եւ Լիբանանը կը վերադառնայ շրջանին մէջ կրթութեան լուսաւոր ջահը ըլլալու դերին: Ան, խօսքը ուղղելով շրջանաւարտ ուսանողներուն, ըսաւ. «Դուք հիմնական տարրերն էք Լիբանանին այդ դերակատարութիւնը վերադարձնելու գործին մէջ, դուք Լիբանանի մեծագոյն արժեքն էք»:

Սրտի խօսք արտասանեց Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսեան, որ բարձր գնահատեց շրջանաւարտներուն, ծնողներուն եւ Հայկազեան համալսարանի անձնակազմին ճիգերը, մանաւանդ այս դժուարին պայմաններուն մէջ: Ան անդրադարձաւ բարձրագոյն կրթութեան կարեւորութեան եւ անոր հետ կապուած մարտահրաւերներուն:

Իր խօսքին մէջ Վեր. Դոկտ. Հայտոսեան հիմնականին մէջ կեդրոնացաւ «վաղուան դաստիարակը» հասկացութեան վրայ եւ այն ձեւերուն, որոնց ճամբով կարելի պիտի ըլլայ գտնել «մարդկային փորձառութեան մէջ հասաստակալիցութիւնը»: Պատասխանելով «մեր գաւազները ո՞վ պիտի ուսուցանէ, ի՞նչ, ո՞ւր, ե՞րբ եւ ինչպէ՞ս» հարցումին՝ Փ. Հայտոսեան ըսաւ. «Նոյնիսկ եթէ մեքենաները պիտի ըլլան միջոցը, հարցումը հետեւեալն է՝ ո՞ր մեքենան, ի՞նչ մեքենայով, ի՞նչպիսի բովանդակութիւն եւ ի՞նչ նպատակով: Այս բոլորին մէջ մեր դերակատարութիւնը պիտի ըլլայ մարդկը առողջ հասաստակալիցութեան մէջ պահել»:

Շարունակելով՝ ան բացատրեց, որ հիմնական հարցումը կը վերաբերի «վաղուան», շրջանաւարտներուն յայտնելով, որ «իրենց պիտի վստահուի ուղին ճշդելու եւ յառաջ ընթանալու աշխատանքը»:

«Շրջանաւարտներ, արդէօք ի՞նչ պիտի ըլլա՞ք ձեր հմտութիւնները ցոյց տալու, ժամանակ տրամադրելու, դուք ձեզ ծանայութեան մէջ դնելու, ձեր օրինակով առաջ-նորոգելու, եւ կարեւորագոյնը՝ դրսեւորելու զգայուն ոգիի այն տեսակը, որ շողջողուն է, թափանցիկ, վստահելի եւ ինքնավստահ, որ ինքզինք կը նուիրէ այն բարձրագոյնին, որ մարդ կրնայ նուաճել: Կը հաւատամ, որ Աստուած մեզ այդ նպատակով ստեղծած է», հաստատեց Հայկազեան համալսարանի նախագահը:

Շրջանաւարտներուն խօսքը արտասանեցին Ալեք Կալիպեան եւ Այյա Թահրը, որոնք շրջանաւարտներուն անունով շնորհակալութիւն յայտնեցին իրենց ծնողներուն, դասընկերներուն, ուսուցչական կազմին եւ Հայկազեան համալսարանին:

Գեղարուեստական յայտագիրով հանդէս եկան շրջանաւարտներ Կարէն Գազանճեան եւ Նուր Տաուք, դաշնակի ընկերակցութեամբ Արի Վարդանեանի: Անոնք երգեցին «Տը Փրեյըրը» («Աղօթքը») երգը:

Հանդիսութիւնը ավարտեցաւ համալսարանի քայլերգին երգեցողութեամբ, որուն յաջորդեց Հայկազեան համալսարանի նախկին հովիւ Վեր. Նշան Պազգալեանի օրհնութեան աղօթքը:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ ԱՆԹԻԼԵԱՍ

Ուրբաթ, 1 Յունիս 2022-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս պիտի կատարէ Սրբալոյս Միւռնի օրհնութիւնը:

Մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքին մէջ յատուկ կարեւորութիւն ներկայացնող դէպք մըն է Միւռնի օրհնութիւնը: Մեր ժողովուրդի գաւազներուն համար ան առիթ է քրիստոնեական հաւատքի ամրապնդման, հոգեւոր կեանքի վերանորոգման եւ ազգային պատկանելիութեան ամրացման:

Դարաւոր աւանդութեան համաձայն, Միւռնի օրհնութեան առիթով մեր ժողովուրդի գաւազները ուխտ կ'ընեն եւ սրտաբուխ նուիրատուութիւններ կը կատարեն, որպէս գործնական մասնակցութիւն Միւռնի օրհնութեան սրբազան խորհուրդին:

Այս առիթով, մեր նուիրատու ազգայիններուն դիւրութիւն ընծայելու համար, բացած ենք հետեւեալ դրամատնային հաշիւը.-

Account: R-502039
Beneficiary: Armenian Catholicosate of Cilicia
Iban: CH77 08755 0502 0390 0400
Bank: Banque Pictet & Cie SA,
Address: Route des Acacias 60, CH-1211 Geneva 73
Swift: PICTCHGG
Bank Phone number: +41 58 323 2323

Նուիրատու ազգայինները կրնան նաեւ Ազգ. Առաջ-նորդարաններու ճամբով կատարել իրենց նուիրատուութիւնները, իսկ Լիբանանի պարագային՝ ուղղակի Կաթողիկոսարանին:

ՄԻՒՌՆՈՐՅԵՔԻ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲ

ՑԱՒԱՅՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ՝ Ընկ. Վահի Ազըլեանի մահուան տխուր առիթով, Տեր եւ Տիկ. Ընկ. Ատուր եւ Ալին Անթալեաններ (Հալեա), իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ գաղափարի ընկերներուն, եւ փոխան ծաղկեպսակի «Արարատ» օրաթերթին կը նուիրեն 50.000 լ.ն.:

Նոյն առթիւ՝
Ընկ. Յակոբ Ատուր Անթալեան (Հալեա) 50.000 լ.ն.
Տեր եւ Տիկ. Ընկ. Հրաչ Գեորգեան (Հալեա) 50.000 լ.ն.
Տիար Յովիկ Անարեան (Հալեա) 50.000 լ.ն.

ՀԱՄԱԿԱՐԲԵՐԴՑԻՎԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ Դերութեւ - Լիբանան

Ընդհանուր Անդամական Ժողով եւ Հանգուցեալ Հայրենակիցներու Հոգեհանգստեան Պաշտօն

Նկատի առնելով երկրիս բարեկեցութեան առողջ պահպանական պայմանները, Միութեան վարչութիւնը այսու կու գայ ուրախութեամբ յայտնել իր յարգելի անդամներուն, թէ Միութեան յաջորդ Ընդհանուր անդամական ժողովը տեղի պիտի ունենայ

Կիրակի, 19 Յունիս 2022-ին:
Հանգուցեալ Հայրենակիցներու Հոգեհանգստեան պաշտօն յաւարտ Ա. Պատարագի Սրբոց Բառասնից Մասնակց եկեղեցի

Ընդհանուր Անդամական Ժողով եւ Ընտրութիւն «Պատկեր» Մշակութային եւ Արուեստի Կեդրոն, Նոր Մարաշ:

Լիբանանի Համախարբերողիական Միութեան Վարչութիւն

Այս առթիւ, անգամ մը եւս կու գանք վերլիշել Համախարբերողիական Միութիւններու նորոգ հանգուցեալ պատուական գաւազները եւ Ա. Հոգիին Միջխարութիւնը հայցել անոնց սիրելիներուն եւ վարչական գործակիցներուն:

- Օրդ. Մարալ Անթոյեան, Լիբանան, դաստիարակ, մտաւորական
- Դրն. Գառնիկ Մկրտիչեան, Լիբանան, ազգային գործիչ
- Դրն. Սամուէլ Իլանճեան, արուստագետ, Լիբանանի ապա ԱՄՆ Գալիֆորնիոյ վարչութիւններ
- Դոկտ. Կարպիս Տեր Եղիայեան, մտաւորական, դաստիարակ, ատենապետ Գալիֆորնիոյ Համախարբերողիական Մշակութային Միութեան:

BOGHOS OPTIC
 Autoroute Jdeideh,
 Tel.: 01-870016

ՄԱՐԿԱԲԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴԻՐՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի, 12 Յունիս 2022-ին, Անթիլիասի Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին, պիտի կատարուի սարկաւազական ձեռնադրութիւն:

Ձեռնադրիչ՝
ԳԵՐՇ. Տ. ԿՈՍԻՏԱՍ ԱՐՔ. ՕՂԱՆԵԱՆ

Ս. Պատարագ՝ առաւօտեան ժամը 9:30
 Ձեռնադրութիւն՝ առաւօտեան ժամը 10:00
 Զարոգ՝ առաւօտեան ժամը 11:00

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւազներուն մասնակցելու տոյն հոգեպարար արարողութեան եւ աղօթակից դառնալու մեր Դարեւալեքի ընծայեալներուն, որպէսզի իրենց աստուածահաճոյ առաքելութեան մէջ հաստատ մնան եւ ամուր քայլերով ընթանան «դէպի աղբիւրը Լոյսին»:

ՏԵՆՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ

ՀԱՅ ԵՒ ՌՈՒՄ ԲԺԻՇԿՆԵՐԸ «ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ»...

(Շարունակուած Գ. էջէն)

Իրենց հնարաւորութիւնները եւ տրվելու լաւագոյն մասնագետները: Այսօր եւ շատ ուրախ են, որ ստորագրեցին համագործակցութեան յուշագիր, որ պարզապէս պաշտօնական թուղթ մը պիտի չըլլայ: Մենք պիտի իրականացնենք մասնագիտական հանդիպումներ, փոխադարձ վերապատաստումներ, ինչ որ պիտի տայ ամենակարեւորը՝ առողջութիւն մեր երեխաներուն, եւ մենք բոլորս պիտի աշխատինք այս նպատակին համար», ըսաւ Ն. Ֆիլաթովի անուան մանկական քաղաքային հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Անթոնիան Զուպարովան:

«Տոմ Մոսկովի» կեդրոնի գլխաւոր տնօրէն Վահրամ Կարապետեանը ընդգծեց, որ կեդրոնը միշտ աշխույժ աշխատանքներ կը տանի միջազգային համագործակցութիւններ իրականացնելու ուղղութեամբ, իսկ բժշկութեան ոլորտը համագործակցութեան առաջնային օղակն է: «Ն. Ֆիլաթովի անուան մանկական քաղաքային մասնագետներ են, որոնք պիտի փոխանցեն իրենց մեծ փորձը եւ փոխադարձաբար պիտի վերցնեն հայ մասնագետները: Այս ամենը կը կատարուի ի նպաստ մեր երեխաներուն առողջութեան եւ յարմարաւետութեան: Ես վստահ եմ, որ այս օրերուն ե՛ւ մեր մասնագետները կը ստանան կարեւոր փորձ, ե՛ւ մեր երեխաները համատեղ որակեալ բժշկական օգնութիւն», ըսաւ Վահրամ Կարապետեանը:

Մ Ա Հ Ա Ջ Դ

Տեր եւ Տիկ. Տոքթ. Արմէն եւ Արագ Արսլանեան եւ դստերը՝ Ռոգ եւ Լիլի
 Տեր եւ Տիկ. Սարգիս եւ Մարալ Պալեօգեան եւ գաւազները՝ Տոքթ. Փաթիլ եւ Տոքթ. Բիւզանդ (ԱՄՆ)
 Տեր եւ Տիկ. Արմէն եւ Սալիք Լուսարարեան եւ գաւազները՝ Անի Արփի, Գեորգ Ժագ, Հրանդ Հայկ
 Հանգուցեալ Յակոբ Արսլանեանի ընտանիք (ԱՄՆ)
 Տեր եւ Տիկ. Յարութիւն Արսլանեան եւ ընտանիք
 Տեր եւ Տիկ. Բիւզանդ Արսլանեան եւ ընտանիք
 Հանգուցեալ Էլիզ Տոնոյեանի ընտանիք (ԱՄՆ)
 Հանգուցեալ Ռփսանա Տոնոյեանի ընտանիք (ԱՄՆ)
 Տեր եւ Տիկ. Յարութիւն եւ Ազատ Թորոսեան ընտանիք (ԱՄՆ)
 Տեր եւ Տիկ. Մելիք եւ Ազնիւ Թորոսեան եւ ընտանիք
 Տեր եւ Տիկ. Ներսէս եւ Սեդա Թորոսեան եւ ընտանիք
 Մարալ Տարաքճեան եւ ընտանիք (ԱՄՆ)
 Գազանճեան, Տեր Կարապետեան, Տուրսունեան, Թորանեան, Կարապետեան, Նգրուրեան, Աբրահամեան ընտանիքներ
 եւ համայն Արսլանեան, Թորոսեան, Պալեօգեան, Լուսարարեան, Եթենքեան, Ռուլահեան, Աստուրեան, Պեպեճեան, Թերզիպաշեան, Թանկուքեան, Պապահեքեան, Վահեճեան, Պալեան, Գրուկի, Գրակըն, Թնճուկեան, Փեղուկեան եւ համայն հարազատներ կը գուժեն իրենց հօր, հօրեղբօր եւ հարազատին՝

ՀՐԱՆԴ ԱՐՍԼԱՆԵԱՆ-Ի (Շնեալ 1929-ին)

մահը, որ պատահեցաւ Զորեշքաթքի, 8 Յունիս 2022-ին, Պոսթըն:
 Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 13 Յունիսին, Սբ. Երրորդութեան եկեղեցւոյ մէջ, 145 Պրաթըլ փողոց, Գամպրիճ, Պոսթըն:
 * Ներկայս ընդունիլ իբրեւ մահազո:
 * Յաւակցութիւնները պիտի ընդունուին Հ.Բ.Մ.-ի ՏԵՄԻՐՃԵԱՆ կեդրոնին մէջ, Տպայէ, Երկուշաբթի, 13 Յունիս 2022-ին, առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
 Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: araradoratert@gmail.com
 ارارات جريدة يومية أرمينية | المديرية المسؤولة: أني صرافيان
 تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (ش.م.م.)